

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը խստիւ կը դատապարտէ Վատիկանը՝ «Քրիստոնէութիւնը Ատրպէյճանի մէջ, պատմութիւն եւ արդի ժամանակներ» խորագրեալ միջազգային համաժողովը հիւրընկալելու համար, որ կայացաւ Հռոմի մէջ՝ Ատրպէյճանի կառավարութեան եւ անոր գիտական-ապացուցողական քարոզչամեքենայի նախաձեռնութեամբ:

Մենք կը պնդենք, թէ Հայ մասնագէտներու ակնյայտ բացակայութիւնը սոյն համաժողովէն, միտուած էր պետական մակարդակով պատմութիւնը վերախմբաւորելուն, խեղաթիւրելուն եւ կեղծ պատմագրութիւն ներկայացնելուն, որը կը նուազեցնէ Վատիկանի վարկը եւ վայել չէ անոր շափանիշներուն եւ շունի որեւէ բացատրութիւն՝ ֆինանսական շահոյթ ապահովելէն զատ:

Մենք կը պնդենք, թէ Վատիկան անպատասխանատու քայլ մը ըրած է՝ արտօնելով որ իր գիտական հարթակը հնարամտօրէն օգտագործուի շինծու պատմութիւն տարածելու նպատակով, որը կը փորձէ ջնջել Հայ Առաքելական Եկեղեցւոյ բազմադարեայ ներկայութիւնը Հարաւային Կովկասի մէջ՝ համաշխարհային գիտական մտքի յիշողութենէն: Առանց Հայ գիտնականներու մասնակցութեան այդպիսի միջոցառում հիւրընկալելով Վատիկան ինքզինքին մեղսակից ըրած է՝ դառնալով զէնք պատմութեան եւ բնիկ քրիստոնեայ ժողովրդի մը դէմ, որուն ականգը համաշխարհային քրիստոնէութեան՝ անվիճելի է նոյնիսկ իրենց գիտական ճանաչումով:

Մենք նաեւ կը պնդենք, թէ Վատիկան ականատես եղած է դիտաւորեալ հնութեան յօրինումի մը՝ ռազմավարութեան մը, որ կը ձգտի ոչ միայն օրինականացնել ներկայիս տարածքային պահանջները Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, այլ նաեւ ջնջել աւելի հին քաղաքակրթութիւններու ներկայութիւնը, որոնց արմատները խորն են եւ պատմութիւնները վերացնելու համար անյարմար:

Ատրպէյճանի այս գիտական քարոզչամեքենան կը ձգտի կառուցել յետադարձ պատմութիւն մը, որը մոլորեցնող խորութիւն մը պիտի հաղորդէ նորաստեղծ պետութեան: Այդ կ'իրագործուի պատմութեան վերաշարադրման միջոցով:

Սոյն համաժողովը այդ քաղաքական ծրագրի արտայայտութիւններէն մէկն է, հիմնուած այնպիսի պետութեան մը ժամանակաւոր անապահովութեան վրայ, որ կ'ուզէ մոռցուելու դատապարտուած իր կարճ գոյութիւնը մթագնել՝ մշակութային ժառանգութիւն կեղծելով ու Հայ Եկեղեցւոյ սրբազան ժառանգութիւնը իրեն վերագրելով:

Մենք յստակ կը պնդենք, որ իրական ժառանգութեան փոխարէն, այս վարչակարգի գիտական քարոզչամեքենան Վատիկանի մատուցած է բեմադրութիւն մը: Յիշողութեան փոխարէն՝ կեղծիք, պատմական իրողութիւններու նկատմամբ հաւատարմութեան փոխարէն՝ հաշուարկուած ամբարտաւանութիւն մը, որը ժամանակը կը սեպէ որպէս կտաւ, որը պէտք է ներկուի աշխարհաքաղաքական դիրքորոշման համար:

Ասիկա պատմական նիւթ մըն է, որ աւելի կը շարժի ձգտումներով, քան փաստերով: Ասիկա ջանք մըն է՝ ժամանակակից պետականութեան ուրուագծերը փոխանցելու՝ անցեալի մը վրայ, որ գոյութիւն չէ ունեցած:

Այսպիսի համաժողովներու հիմնական թեզը՝ թէ Արցախի (Լեռնային Ղարաբաղ) մէջ գտնուող հայկական քրիստոնէական յուշարձանները կը պատկանին այսպէս կոչուած «կոմկասեան աղուանական» քաղաքակրթութեան, ոչ միայն գիտականօրէն անհիմըն են, այլեւ պատմական ժխտողականութեան շարագործ արարքներ:

Ասիկա ուղղակի յարձակում է բնիկ Հայ ժողովուրդին գիտութեան եւ արժանապատուութեան վրայ, ժողովուրդի մը, որուն սուրբ աւանդութիւնները հազարամեակներով գոյութիւն ունեցած են այդ հողերուն վրայ: Այստեղ խնդիրը միայն գիտական կեղծիքը չէ, այլ՝ մշակութային ժխտումը, որ համակարգուած կերպով կը մերժէ Հայ ժողովուրդին բնիկութիւնը եւ իր արժանի տեղը՝ քրիստոնէական եւ քաղաքակրթական պատմութեան մէջ:

Մենք կոչ կ'ընենք Վատիկանի, որ պահպանէ պատմական ճշմարտութեան ամբողջականութիւնը եւ մերժէ ամէն տեսակ կեղծ ժառանգութիւն եւ յօրինուած աւանդութիւն, որոնք կը նպատակադրեն ջնջել բնիկ քրիստոնէական համայնքներու ապրուած փորձառութիւնը: Մենք կը յորդորենք Վատիկանին հեռու մնալ նման վերաշարադրողական նախաձեռնութիւններէն եւ վերահաստատել իր յանձնառութիւնը՝ քրիստոնէական աւանդութեան իսկութիւն պահելու առաքելութեան՝ ի մասնաւորի Սուրբ եւ Առաքելական Հայոց Եկեղեցւոյ հանդէպ:

Իբրեւ հայկական քրիստոնէութեան շորս հին եւ գոյող ճիւղերէն մէկը՝ կը յայտարարենք, թէ ասիկա բարոյական իսկութեան պահ մըն է քրիստոնէական գիտական աշխարհի համար. հայոց անցեալի ճշմարտութիւնը չի կրնար թաղուիլ վարձուած եւ քարոզչութեամբ կերտուած պատմական սուտերու ներքեւ: Մեր եկեղեցիները, մեր վանքերը, մեր ճարտարապետութիւնը, մեր գեղագիտութիւնը, մեր խաչքարերը, մեր ձեռագիրները, մեր արարողակարգը, մեր հազարամեայ շարականները, մեր այբուբենը, մեր սուրբերն ու նահատակները, մեր հին գերեզմանատները, մեր սրբազան յուշերը, մեր դպրանոցները, եւ մեր ժողովուրդը՝ բոլորն ալ կենդանի վկայութիւն են Հայ Առաքելական աւանդութեան, որ նախորդած է եւ պիտի գերազանցէ այն խորամանկ նկրտումները, որոնք կը ձգտին ջնջել մեզ՝ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ մտաւոր յիշողութենէն:

12 Ապրիլ, 2025

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

COMMUNIQUE

It is with deep sorrow that the Armenian Patriarchate of Jerusalem has received the news of the passing of His Holiness Pope Francis, the Bishop of Rome and Supreme Pontiff of the Roman Catholic Church.

His Holiness was a true example for all Christian clerics, hierarchs, and faithful, never failing to walk a path of humility and never forgetting his papal due to the needy and under-

served. Throughout his papacy, Pope Francis demonstrated profound commitment in seeking out Christian justice. The Armenian Church remembers with gratitude his historic Apostolic Journey where he visited Armenia in 2016. Pope Francis stood in solidarity with the Armenian people and recognized the sufferings endured during the Armenian Genocide, witnessing the canonization of our slain martyrs as saints. We also remember Pope Francis' efforts in the Catholic veneration of the Armenian theologian-poet, Gregory of Narek, who was made a Doctor of the Catholic Church in 2015. Pope Francis' ecumenical wisdom and action inspired the world and duly strengthened the spirit of fraternity between our ancient churches.

The Armenian Patriarchate of Jerusalem mourns this great loss alongside our Roman Catholic brothers and sisters, especially the faithful of the Latin Patriarchate of Jerusalem and the Franciscan Friars. We pray that the soul of His Holiness Pope Francis may rest in the inextinguishable light of Christ. May God illuminate his soul.

23 April, 2025

DIVAN OF THE ARMENIAN PATRIARCHATE

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուս Ուղղափառ Եկեղեցին անհեթեթութիւն եւ յիմարութիւն գործած է՝ պարզեւատրելով Ատրպէյճանի Առաջին Տիկինը Սուրբ Օլկայի շքանշանով: Այս շքանշանը սովորաբար կը տրուի քրիստոնէական առաքինութիւններ ունեցող անձերուն, որոնք հասարակութեան մէջ աւանդական արժէքներու պահպանման, միջ-մշակութային եւ միջ-կրօնական երկխօսութեան խթանման գործին մէջ աւանդ ունին: Այս անմիտ քայլով Ռուս Ուղղափառ Եկեղեցին աղաւաղած է իր հեղինակութիւնը: Իհրամ Ալիեւի բռնապետական իշխանութեան ներքոյ Ատրպէյճանը կազմակերպած է Արցախի հայկական քրիստոնէական ժառանգութիւնը ոչնչացնելու համակարգուած արշաւ: Կործանած կամ իբրեւ մզկիթ վերածոգտագործած է Շուշիի եւ այլ շրջաններու քանի մը եկեղեցիներ՝ ջրնջելով դարաւոր հայկական ներկայութիւնը:

Մենք խստագոյնս կը դատապարտենք Կիրիլ Պատրիարքի պարզեւատրման որոշումը, եւ վստահ ենք, որ այդ մեծ շեղում մըն է Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ պատմական սկզբունքներէն: Պատրիարքի այս քայլը վկայութիւնն է անոնց հետ համերաշխութեան, որոնք միջազգային ասպարէզին վրայ կ'իրականացնեն մշակութային եւ կրօնական ոչնչացում եւ մենք այն կը որակենք ակնյայտ թշնամանք Հայ Առաքելական Եկեղեցւոյ դէմ:

Զարհուրելին այն է, որ Ատրպէյճանի բռնապետի հայկական ներկայութիւնը Արցախէն ջնջելու բացայայտ գործողութիւնները այժմ անուղղակի կերպով կը զնահատուին իր ամենամօտ քաղաքական դաշնակիցէն՝ առաջին տիկին եւ փոխ-նախագահ Մեհրիբան Ալիեւայի պարզեւատրումով: Ասիկա ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ատրպէյճանի կողմէ Հայոց եւ Քրիստոնէութեան դէմ իրականացուող մշակութային ցեղասպանութեան շարունակական արշաւի լուռ հաւանութիւն եւ սատարում:

Յստակ է, որ Ատրպէյճանի իշխանութիւնը տարածաշրջանի մէջ իր կողմէ ստեղծած շինծու պատմութեան իբրեւ միակ թշնամի կը նկատէ Հայ Առաքելական Եկեղեցին:

Մշակութային ոչնչացման մեղսակից քաղաքական գործիչի մը եկեղեցական պարգևի արժանացնելու բեմադրուած շնորհումը, խեղաթիւրուած խորագիրներով ակադեմիական գիտաժողովներու կազմակերպումը կը բացայայտեն Ալեւի իշխանութեան նենգ հաշուարկներն ու համակարգուած արշաւը Հայ Առաքելական Եկեղեցւոյ դէմ, որը միտուած է նուազեցնելու անոր զօրութիւնը, փառքը եւ սրբազան հեղինակութիւնը, նոյնիսկ եւ յատկապէս այդ ըրած են Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ նման հաստատութեան մը ամենաբարձր մակարդակներու մէջ սպրդելով:

Մենք կը հաստատենք մեր աներկբայ պատրաստակամութիւնը՝ դիմագրաւելու բոլոր ռազմավարական յարձակումները ուղղուած մեր Սուրբ եւ Առաքելական Եկեղեցւոյ դէմ: Հայ Առաքելական Եկեղեցին, որ սկիզբ առած է նախքան Ատրպէյճանի պետութեան ու մշակոյթի գոյութիւնը, պիտի շարունակէ իր վսեմ առաքելութիւնը՝ անսասան հաւատքով ու նուիրումով:

Մենք կը մերժենք հոգեւոր պատիւներու քաղաքական շահագործումը եւ կը դատապարտենք բոլոր փորձերը՝ ուղղուած մեր Եկեղեցւոյ փառքի, հեղինակութեան եւ յաւիտենական վկայութեան խաթարումին:

6 Մայիս, 2025

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

21-22 ՄԱՅԻՍ, 2025, ՍՈՒՐԲ ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱԿԷՄ

21 Մայիս, 2025-ի առաւօտեան ժամը 9:00-ին, Պատրիարքարանի դահլիճին մէջ մեկնարկեց Սուրբ Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովի 14-րդ նիստը, որ շարունակուեցաւ նաեւ կէսօրէ ետք ժամը 16:00-ին եւ յաջորդ օրը՝ 22 Մայիս, 2025-ի առաւօտեան եւ կէսօրէ ետք:

Համաձայն Տնօրէն Ժողովի կողմէ ներկայացուած օրակարգի՝ Միաբանութեան անդամներու ներկայութեան ստուգումէ ետք Ժողովը բացաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը, «Իմաստութիւն Հօր Յիսուս» աղօթքով, Սուրբ Աթոռ գտնուող 24 Միաբան եղբայրներէն 22-ի ներկայութեամբ:

Որպէս օրակարգ ներկայացուած էր.

• Միաբանական Ընդհանուր Ժողովի նախորդ նիստերու ատենագրութեանց ընթերցում եւ վաւերացում

- Ընտրութիւն Միաբանական Ընդհանուր Ժողովի դիւանի
- Ընտրութիւն Տնօրէն Ժողովի դադարեալ երեք անդամներու
- Համարատուութիւն Տնօրէն Ժողովի եւ վաւերացում:
- Համարատուութիւն Ելեւմտից տեսչութեան եւ պիւտճէի ներկայացում
- Համարատուութիւն Կալուածոց տեսչութեան

Նախ Միաբանական Ընդհանուր Ժողովի ներկայ դիւանի Ա. եւ Բ. Ատենադպիրներ՝

Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան եւ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան ընթերցան Միաբանական Ընդհանուր Ժողովի նախորդ երեք նիստերու ատենագրութիւնները: Նախագահ Պատրիարք Սրբազան Հայրը եւ ժողովականները գնահատելով կարգացումը երեք ատենագրութիւնները՝ ձեռամբարձաւ վաւերացուցին զանոնք: Ապա Նախագահ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնելով ներկայ դիւանի գործունէութեան, առժամեայ Ատենապետ նշանակեց այս օրերուն Սուրբ Աթոռ ժամանած Սրբոց Յակոբեանց Միաբաններէն Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանը եւ առժամեայ Ատենադպիր նշանակեց Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանը՝ կազմակերպելու Միաբանական Ընդհանուր Ժողովի դիւանի անդամներու ընտրութիւնը:

Առժամեայ Ատենապետ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան շնորհակալութիւն յայտնեց Առժամեայ Ատենապետի պաշտօնն իրեն վստահելու համար եւ անմիջապէս յայտարարեց ընտրութիւն Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանի: Միաբան Հայրերը նոր երկու տարուայ շրջանի համար իբր Միաբանական Ընդհանուր Ժողովի դիւան ընտրեցին հետեւեալները.

Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան Ա. Ատենապետ

Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Բ. Ատենապետ

Տ. Սիրոն Աբեղայ Թաքուշեան Ա. Ատենադպիր

Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան Բ. Ատենադպիր

Առժամեայ Ատենապետ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան այս անգամ շնորհակալութիւն յայտնեց Միաբանական Ընդհանուր Ժողովի Ատենապետի պատասխանատու պաշտօնն իրեն վստահելու համար եւ շնորհաւորելով նորընտիր Դիւանի անդամները՝ վարեց Միաբանական Ընդհանուր Ժողովի 14-րդ նիստը՝ ատենադպրութեամբ Ա. Ատենադպիր՝ Հոգեշնորհ Տ. Սիրոն Աբեղայ Թաքուշեանի եւ Բ. Ատենադպիր՝ Հոգեշնորհ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեանի:

Ժողովս անմիջապէս անցաւ օրակարգի յաջորդ կէտին եւ գաղտնի քուէարկութեամբ քուէից բացարձակ մեծամասնութեամբ ներկայացուած կրկնանուն ցանկէն Տնօրէն Ժողովի երեք նոր անդամներ ընտրեց.

Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանը

Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանը

Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանը

Միաբանական Ընդհանուր Ժողովի դիւանը շնորհաւորեց Տնօրէն Ժողովի երեք նոր անդամներու ընտրութիւնը եւ հրաւիրեց Նախագահ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը՝ կատարելու Միաբանական Ընդհանուր Ժողովի 14-րդ նիստի իր բացման խօսքը: Ապա Ատենապետ Սրբազան Հայրը անցնելով օրակարգի յաջորդ կէտին՝ հրաւիրեց ներկայ Տնօրէն Ժողովի Ա. Ատենադպիր Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեանը՝ ներկայացնելու Տնօրէն Ժողովի 2023-ի Մարտէն մինչեւ 2025-ի Մայիս շրջանի համարատուութիւնը:

Տնօրէն Ժողովի երկարաշունչ համարատուութենէ ետք, Միաբան Հայրերը նախ շնորհակալութիւն յայտնեցին Հայր Ներսէսին՝ կատարած աշխատանքի համար, ապա իրենց յուզող հարցերն ուղղեցին Տնօրէն Ժողովի նախկին անդամներուն եւ ստանալով բաւարար պատասխաններ ձեռամբարձաւ միաձայն ընդունեցին Տնօրէն Ժողովի 2023

Մարտէն մինչեւ 2025 Մայիս տարիներու համարատուութիւնը:

Տնօրէն Ժողովի համարատուութենէ ետք Ատենապետ՝ Գերաշնորհ Տ. Խաթակ Արքեպիսկոպոս Պարսամեան Միաբանական Ընդհանուր Ժողովի ներկաներուն ներկայացուց Նախագահ Պատրիարք Սրբազան Հօր խնդրանքով ստեղծուած «Խորհրդատուական մարմնի» կազմութեան եւ անոր գործունէութեան սահմաններու մասին: Սոյն «Խորհրդատուական մարմինը», որու կազմի մէջ ներգրաւուած են փաստաբաններ, քաղաքագէտներ, PR մասնագէտներ, անուանի անձեր, ղեկավարներ եւ բարերարներ, կոչուած է զանազան ուղղութիւններով ուսումնասիրելու Պատրիարքութեան առնչուող խնդիրները եւ միմիայն խորհրդատուութիւն տալու: «Խորհրդատուական մարմինը» որեւէ որոշում առնելու իրաւունք չունի, անոր խորհրդատուութեամբ բոլոր որոշումները պիտի առնեն Տնօրէն եւ Միաբանական Ընդհանուր Ժողովները:

Ատենապետ Սրբազան Հօր ներկայացումէն ետք, Միաբան Հայրերը այլեւայլ հարցերու շուրջ իրենց գրաւոր առաջարկներն ուղղեցին Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանին:

22 Մայիս, 2025-ի առաւօտեան ժամը 9:00-ին, շարունակուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողովի 14-րդ նիստը: Օրակարգի յաջորդ նիւթի համաձայն Ելեւմտից տեսչութեան վարիչ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան մանրամասն ներկայացուց Պատրիարքութեան 2022-2024 թուականներու Ելեւմտական համարատուութիւնը եւ պիտեճէն: Ապա Միաբանական Ընդհանուր Ժողովը Պատրիարքութեան բոլոր բաժանմունքներու ծախսերն ու եկամուտները բժախնդրօրէն քննելէ, Թէոդորոս Սրբազանին հարցումներ ուղղելէ ետք ձեռամբարձաւ միաձայն ընդունեց Ելեւմտական համարատուութիւնը:

Միաբանական Ընդհանուր Ժողովի օրակարգի վերջին նիւթն էր Կալուածոց Տեսչութեան համարատուութիւնը, որ ներկայացուց Պատրիարքութեան Կալուածոց Տեսուչ՝ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան: Սրբազան Հայրը մէկ առ մէկ Միաբանական Ընդհանուր Ժողովին ներկայացուց Պատրիարքութեան Կալուածական բոլոր պայմանագիրներու մանրամասնութիւնները: Միաբան Հայրերն իրենց յուզող հարցումներն ուղղեցին Սրբազան Հօրը եւ գոհացուցիչ պատասխաններ ստանալէ ետք, արձանագրեցին որ տարիներ շարունակ այսպիսի մանրամասնեալ համարատուութիւն չէ ներկայացուած Միաբանական Ընդհանուր Ժողովին եւ գնահատանքով ձեռամբարձաւ միաձայն ընդունեցին ներկայացուած Կալուածոց տեսչութեան համարատուութիւնը:

Միաբանական Ընդհանուր Ժողովը իր աւարտին հասաւ 22 Մայիս, 2025-ի, երեկոյեան՝ 19:00-ին:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց բոլոր Միաբան Հայրերուն եւ Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանին, համարատուութիւններ ներկայացուցած Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերուն, ապա շնորհաւորելով Տնօրէն Ժողովի նորընտիր անդամները՝ յաջողութիւն մաղթեց անոնց:

Միաբանական Ընդհանուր Ժողովի 14-րդ նիստը փակուեցաւ Նախագահ Պատրիարք Սրբազան Հօր աղօթքով: